

# Ենթազանգվածներ

Ամբողջ թվերի զանգվածը կանվանենք «արդար», եթե կենտ ինդեքսներով տարրերի գումարը հավասար է զույգ ինդեքսներով տարրերի գումարին:

Տրված է  $n$  երկարության ամբողջ թվերի հաջորդականություն: Պահանջվում է գրել ծրագիրը, որը ներածում է հաջորդականությունը, պահում է այն զանգվածի մեջ, ապա հաշվում է, բոլոր «արդար» ենթազանգվածների քանակը: Ենթազանգված ասելով, հասկանում ենք զանգվածի ինչ-որ  $L$  ինդեքսով տարրից մինչև  $R$  ինդեքսով տարրը ( $L < R$ ) բոլոր իրար հաջորդող տարրերը:

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է հաջորդականության  $n$  երկարությունը ( $1 \leq n \leq 10^5$ ): Երկրորդ տողում տրված են  $n$  ամբողջ թվեր՝ հաջորդականության  $a_i$  տարրերը ( $-10^9 \leq a_i \leq 10^9$ ):

## Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ պահանջվող քանակը:

Օրինակ

Մուտք	Ելք
7 1 2 1 3 4 1 1	6
2 0 0	3

Առաջին օրինակում «արդար» են  $[1\ 2\ 1]$ ,  $[1\ 3\ 4]$ ,  $[1\ 1]$ ,  $[2\ 1\ 3\ 4]$ ,  $[2\ 1\ 3\ 4\ 1\ 1]$ ,  $[3\ 4\ 1]$  ենթազանգվածները

## Ենթախնդիրներ

Համար	Սահմանափակում	Միավոր
0	Օրինակ	0
1	$n \leq 100, -10 \leq a_i \leq 10$	10
2	$n \leq 1500, -10 \leq a_i \leq 10$	20
3	$n \leq 10^5, -10 \leq a_i \leq 10$	30

5	Լրացուցիչ սահմանափակումներ չկան	40
---	---------------------------------	----